

## Հ Ր Ա Խ Ե Ր

Զեզի որ նամբուս՝ ինձ՝ հանդիպեցաք,  
Քալեցինք պահ մը... գացիք-շըդարձաք.  
Սիրտերնիս կէս մը իրարու բացինք,  
Մէկսեղ խաղացինք, մէկսեղ խընդացինք.  
Զեզի ամենուդ, իմ խաղընկերներ,  
Խընկաբոյք աղօքք, օրինութիւն ու սէր:

Ամենուդ համար ունիմ խոր կարօտ,  
Եկէք այս գիշեր ամէնքըդ իմ մօտ.  
Եկէք Պաղտառի լայն անապատէն...  
Նահր-ըլ-Օմարէն... Վանէն, Սալմաստէն.  
Ամենուդ համար սիրտս սեղան է քաց,  
Վրան անխառն գինի և ցորենի հաց.  
Ամենուդ սիրոյ երաւէր կը ոքրիեմ,  
Եկէք եեղ մ'ալ ձեզ սուրբ սիրով գքրիեմ:

\*\*\*

Արդէն աշունն է իջեր  
Իմ սիրտիս մէջ և իմ շուրջն.  
Ո՞վ զիս այսակս կը կանչէ,  
Ուրեկ՝ այս քաղցըրը մըրմունիզ:  
— Զա՞ն, մանկութիւն իմ բոկատ,  
(Այնքա՞ն եեռու, այնքան մօտ)  
Մըրմունզովդ զիս տանչէ,  
Ես քու ձայնիդ եմ կարօտ:

## Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Կեսանքէն ա'լ ինձի ի՞նչ կը մընայ,  
— Կարօտըդ սիրու մաշող անխընայ.  
Վա՛խ թ'օտար եռդերուն գայն յանձնեմ,  
Օտար եռդն իր լեզուն չիմանայ:

Եկեր եմ ես, կ'անցնիմ, կը գընամ,  
Ես եազար ձեւերով կը մընամ.  
Ես շաղուած եմ հողէ ու շաղէ ու շողէ,  
Պիտ' նորէն ես անոնց միանամ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ